

Գեա Շղթայակիրը Պոլիս էր, երբ 1718 Յուլիս 6 ի մեծ հրդեհին մէջ Մայր Եկեղեցին ալ լափուեցաւ: Այն միջոցին՝ գիտենք որ Երուսաղէմի պարտքին համար հանգանակութեան ձեռնարկած էին երկու պատրիարքները: Այս աղէտը չյուսա-հատեցուց զերենք: Եօնանուստէն զբնակչիս առաջնուած էր Մայր Եկեղեցին, որուն շինութեան հսկեցին իբր գործաւոր՝ փոշիններուն մէջ: — Սա-մաթիոյ Ս. Կէորգ Եկեղեցւոյն նորոգութիւնը, եւ Ս. Երրորդութեան մատրան շինութիւնը կոլոտ ըրաւ 1729ին: — Օրթապիւղի Ս. Աստուածածին Եկեղեցին կոլոտ վերաշինեց, զոր հանդիսաւորապէս օծեց կարապետ կթղ.ի նախագահութեամբ 1726ին: — Իւսկիւտարի Ս. կարապետ Եկեղեցին կոլոտ շինել տուաւ Սարգիս Խալֆայի ճարտարապետութեամբ 1726ին. նոյն ատեն նորոգել տուաւ Իւսկիւտարի «Հոֆէրուս»¹, ծանօթ Երուսաղէմի

աշակերաններէն Սարգիս վարդապետ, իրենց պէս գործու-նեայ, շինարար, «այր Խոհեմ յոյժ, եւ քաղցրաքարող, նորոգեց սրբատաշ քարամբք կրամածիւք զԵղըզոտի (= Մշու Ս. Յովհաննէս) լուսաւորչալէն վանդ զսագերն հանգերձ այլովք շինածովք: Եւ անշարունակ լիւ է համահա-նեայ վերադիւն (նախանձոտներուն եւ շարամիտներուն կ'անարկէ) զբնակչիս շինածոյն ծախսն ինքն հոգեաց Եր-րորդայն յարազին վանան մեր (= Ամրոտ) եւ անդ փոխեցաւ առ բաղձալին իւր»:

Ամրոտցիք միշտ անձնանուէր եղած են Մշոյ վանքե-րուն համար: Ուրիշ առթիւ (Բեյ-զադէնի մէջ) ցոյց տուի թէ իրենց բարեացապարտ վարդապետը Վարդան Ս. Առաքելոյ վանքի մասենադարանին ձեռագիրները նորոգել տուած ու կարգադրած է: Այն յօդուածները, որոնց կ'ակ-նարկենք տեղ տեղ, Մաշիկ-Պիլիկ խորագրով հրատարա-կուած են Բեյ-զադէնի մէջ. Թիւ 1128, 1130, 1134, 1141, 1146, 1148, 1150:

¹ «Հոֆէրուս» կ'ըսուին այն ազգային հաստատու-թիւնները, որոնց մէջ ձրի կ'օթեւանին ծամբորդներ, մա-նաւանդ ուխտաւոր ծամբորդներ: Ս. Յակոբայ վանքը ոչ